## ՋՐՈՅՑ



# Հարցազրոյց Սելինա Դողանի հետ
# Թուրքիայի առաջին հայ կին պատգամաւորը

ԳՐԻԳՈՐ ՂԱԶԱՐԵԱՆ, ՍՏԱՄԲՈՒԼ



Թուրքիայի ամենահին քաղաքական կուսակցութիւնն է «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութիւնը (ԺՀԿ), կամ այնպէս որ Թուրքիայում են ասում Ջէ. Հէ. Փէ. (Ջոմհուրրիէթ Հալք Փարթիսի):

«Ժողովրդա-հանրապետական» կուսակցութիւնը (ԺՀԿ), հիմնուել է 1923 թուականին, հիմնադրուել է Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի միջոցով, որը եղել է Թուրքիայի Հանրապետութեան հիմնադիրը՝ Օսմանեան կայսրութեան տապալուելուց յետոյ:

ԺՀԿ-ն տասնամեակներ եղել է Թուրքիայում իշխանութեան գլուխ, այժմ համարւում է կառավարութեան ամենագլխաւոր ընդդիմադիր կուսակցութիւնը:

ԺՀԿ-ն համարւում է «Սոցիալ-դեմոկրատ» կուսակցութիւն, հաւատացած է սոցիալիստական սկզբունքներին ու Թուրքիայում ժողովրդավարութեան տարածմանն ու հաստատմանը:

ԺՀԿ-ն նաեւ անդամ է սոցիալիստական ինտերնացիոնալ (սոցինտերն) կազմակերպութեանը, որտեղ անդամ են սոցիալիստ կուսակցութիւնները, դրանց շարքին Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

●Թուրքիայի խորհրդարանական ընտրութիւններում թեկնածու են ներկայացնում կուսակցութիւնները, այս շրջանի ընտրութիւններին մասնակցութեամբ էին չորս գլխաւոր կուսակցութիւն՝
- «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութիւն (ԱԶԿ)
- «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութիւն (ԺՀԿ)
- «Ժողովուրդների ժողովրդավար» (Դեմոկրատիկ) կուսակցութիւն (ԺԴԿ)
- «Ազգային շարժում» կուսակցութիւն (ԱՇԿ)

Խորհրդարանը ունի 550 պատգամաւոր, այս շրջանի ընտրութիւններում (նոյ. 1, 2015), ԱԶԿ-ն շահեց 317 տեղ, ԺՀԿ-ն 134 տեղ, ԺԴԿ-ն 59 տեղ եւ ԱՇԿ-ն 40 տեղ:

2015 թուականի նոյ. 1-ին Թուրքիայում տեղի ունեցաւ երկրի խորհրդարանական 25-րդ ընտրութիւնները եւ ընտրուեց երկրի 26-րդ խորհրդարանը:

Թուրքիայի խորհրդարանի ընտրութիւնների համար թեկնածուներ են ներկայացնում կուսակցութիւնները, անհատները չեն, որ իրենց թեկնածու են դարձնում: Թուրքիայի խորհրդարանը ունի 550 աթոռ, ընտրութիւնների արդիւնքում ԺՀԿ-ն շահեց 134 աթոռ:

ԺՀԿ-ի թեկնածուների ցանկում առաջին անգամ լինելով ներկայացուած էր մի հայ կին՝ տկն. Սելինա Դողանը:

Սփիւռքի հայութեան համար թերեւս հետաքրքիր լինի թէ ով է տկն. Դողանը, ինչպէս ընտրուեց նա Թուրքիայի խորհրդարանի պատգամաւոր եւ ինչեր են ընդհանրապէս նրա մտքերն ու գաղափարները...

Նման հարցումների համար պատասխան ստանալու նպատակով հանդիպեցի տկն. Սելինա Դողանին եւ ունեցանք հետեւեալ զրոյցը, զրոյցի սկզբում տկն. Դողանը նախ համառօտ կերպով բացատրութիւն տուեց, իր կեանքի ու գործունէութեան մասին, ապա ունեցանք շահեկան զրոյց:

Ստորեւ ներկայացնում եմ իմ հարցազրոյցը՝ Թուրքիայի խորհրդարանի առաջին հայ կին պատգամաւոր տկն. Սելինա Դողանի հետ:

* * *

Սելինա Դողան - *Ծնուել եմ Պոլսում, 1977 թուականին, տարրական կրթութիւնս, այսինքն մինչեւ հինգերորդ դասարան յաճախել եմ հայկական «Տարեան» վարժարանում, յետոյ շարունակել եմ Ֆրանսիական դպրոցում: Միջնակարգս աւարտելուց յետոյ համալսարանում սովորել եմ իրաւաբանութիւն: 2004 թուականից մինչեւ խորհրդարանում պատգամաւոր ընտրուելս զբաղուել եմ փաստաբանութեամբ:*

*Միշտ փորձել եմ մեր հայկական համայնքում գործօն ներկայութիւն լինել, կամաւոր կերպով բազմաթիւ աշխատանքներ եմ ունեցել համայնքում, այդպէս որ մեր համայնքում ճանաչուած դէմք եմ, իմ հայրիկս*[1] *էլ նոյնպէս ճանաչուած անձնաւորութիւն է «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութեան անդամ է եւ Ստամբուլի Բաքըրքոյի (Ստամբուլի քաղաքամասերից) քաղաքապետութեան օգնականն է: Մեծացել ու դաստիարակուել եմ «Սոցիալ-դեմոկրատ» գաղափարի տէր ծնողների միջոցով, այնպէս որ հեռու չեմ այդ գաղափարաբանութիւնից:*

*Ամուսինս*[2] *էլ փաստաբան է եւ ճանաչուած անձնաւորութիւն է հայկական համայնքում:*

*Մեր հայկական համայնքի հարցերից ու առօրեայ խնդիրներից հեռու չեմ եւ ծանօթ եմ մեր դժւարութիւններին:*

- Գ. Ղ.- Ինչպէ՞ս արծարծուեց Ձեր թեկնածութեան հարցը:

- *Երբ որոշուեց, որ «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութեան կողմից, հայ համայնքի միջից էլ մի թեկնածու ներկայացուի, նախ իմ հայրիկիս անունը արծարծուեց, բայց քանի որ որոշուել էր, որ թեկնածուն անպայման կին լինի, ապա ես արժանիքը գտայ, որ թեկնածու առաջարկուեմ եւ կուսակցութիւնը իմ թեկնածութիւնը առաջադրեց. սա խորհրդանշական սիմւոլիք մի քայլ չէր, այլ պիտի ասել, որ քաղաքական մէկ կարեւոր քայլ էր. արդէն փոփոխութիւններ են կատարւում «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութեան մէջ, կուսակցութեան ղեկավարութիւնը աւելի է մօտեցել սոցիալ դեմոկրատ սկզբունքներին:*

- Ասացիք, որ «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութեան մէջ փոփոխութիւններ են տեղի ունենում, ինչպիսի փոփոխութիւններ են դրանք:

- *Ինչպէս որ ասացի, կուսակցութիւնը աւելի է մօտենում «Սոցիալ-դեմոկրատ» ուղղուն, «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութիւնը իրեն համարում է մոդեռն կուսակցութիւն եւ այն որ պիտի ժամանակի եւ ժամանակակից հարցերի հետ քայլ պահի, կուսակցութեան ղեկավարութիւնը երիտասարդացել է փորձում է սեռային կին եւ տղամարդ հաւասարութիւնը նկատի ունենալ, օրինակ այս շրջանի խորհրդարանական ընտրութիւններում կին թեկնածուների թիւը բարձրացրեց, արդէն շուրջ 20 կին պատգամաւոր ունի մեր կուսակցութիւնը խորհրդարանում, այս թիւը բաւական չէ, բայց անցեալի համեմատութեամբ աւելի առաջխաղացք է: Կուսակցութեան կադրերը փոխուել են, եթէ նախկինում կային պահպանողականներ, հիմա դրանք չկան, հիմա աւելի սոցիալ դեմոկրատ գաղափարներով եւ ծրագրերով առաջնորդուող դէմքեր են ղեկավարութիւն դարձել, երիտասարդներ եւ կիներ կան գործի գլուխ:*

*Խորհրդարանական ընտրարշաւի ժամանակ եւ մեր միթինգներում կուսակցութիւնը շեշտ էր դնում աւելի սոցիալական հարցերի վրայ, աշխատաւորութեան վիճակի բարելաւում, կանանց եւ երեխաների համար բարւոք վիճակի ստեղծում, քաղաքացիութեան հաստատութեան եւ հաւասար իրաւունքներ ունենալու հարց, այն որ քրդերի հարցը պիտի վերջապէս ունենայ իր լուծումը, դա պիտի նաեւ լուծուի խորհրդարանում, մասնագիտական յանձնաժողովներում, քրդերէնը պիտի դասաւանդուի դըպրոցներում՝ քրդերի համար որպէս իրենց մայրենի լեզու, քրդական քաղաքներում կամ թաղամասերում հին քրդական անունները պիտի վերականգնուի եւ ամենակարեւորը՝ որ ամէն ինչը պիտի լինի թափանցիկ եւ ոչ թէ ծածուկ:*

- Արդեօք Ձեր հայ լինելը կամ կին լինելը, որեւէ արգելք կամ դժւարութիւն ստեղծեց Ձեր ընտրուելու ճանապարհին:

- *Պիտի ասեմ, որ ես բնաւ դժւարութիւն չեմ ունեցել թէ՛ որպէս հայ, եւ թէ՛ որպէս կին: Իմ թեկնածու առաջարկելը մի ժողովրդավարական քայլ էր «Ժողովրդա-հանրապետական» կուսակցութեան կողմից, իրենց համար շատ կարեւոր հարց էր, շատ հովանաւորութիւն եղաւ ինձանից, կուսակցութեան նախագահ պրն. Քըլըչդարօղլուն ինձ շատ հովանաւորեց: Ընտրարշաւի ժամանակ եւ հանդիպումների ընթացքում, սկզբում որոշ ազգային մօտեցումներ ունեցող անձնաւորութիւնների կողմից մի քիչ դիմադրութիւն կար իմ թեկնածութեան նկատմամբ, բայց երբ ես նրանց հանդիպում էի եւ ծանօթացնում էի ինձ, փոխւում էր նրանց կարծիքը, կարեւորը այն է, որ կարողանաս առաջ գնալ, պիտի կարողանալ նոր մթնոլորտ ստեղծել, նոր վիճակներ ստեղծել եւ առաջանալ...*

- Ի՞նչ ծրագրեր ունէք, որպէս Թուրքիայի խորհրդարանի առաջին հայ կին պատգամաւոր:

- *Ես արդէն սկսել եմ իմ աշխատանքներս, պիտի կարգաւորուի մեր համայնքի կալուածների տնօրինման հարցը. Օսմանական ժամանակաշրջանից գոյութիւն են ունեցել հիմնադրամներ (թուրքերէնով՝ վաքըֆներ), որոնք իրաւական կառոյցներ են, մեր բոլոր դպրոցները, եկեղեցիները եւ հաստատութիւնները այդ հիմնադրամների անւան տակ են աշխատում, նոյնն է նաեւ միւս փոքրամասնութիւնների պարագան, այդ վաքըֆները կառավարութիւնից դրամական օգնութիւն չեն ստանում, միաժամանակ տասնամեակների ընթացքում, կառավարութիւնների կողմից հաստատուել են բազմաթիւ օրէնքներ, որոնք սահմանփակել կամ կանխել են այս հիմնադրամների (վաքըֆների) աշխատանքները, նրանք որեւէ նիւթական աղբիւր չունեն, հայերի պարագային բարերարների օժանդակութիւններով է, որ գոյատեւում ենք, այս վաքըֆները պիտի կարողանան եկամուտի աղբիւրներ ունենան, որ իրենց ենթակայ հաստատութիւններին կարողանան կառավարեն, ներկայում գոյութիւն ունեցող օրէնքները այդ կապակցութեամբ թերի են, սահմանափակող են, դրանք պիտի փոփոխութիւնների ենթարկել, փոքրամասնութիւնները պիտի իրաւունքը ունենան իրենց հարցերը այդ ուղղութեամբ. տնօրինելու եւ ես հիմա աշխատում եմ այդ ուղղութեամբ աշխատում եմ եղած օրէնքները կարգաւորեմ եւ հարկ եղած դէպքում նոր եւ ճիշտ օրէնքներ առաջարկեմ, սա իմ առաջնահերթ ծրագրերից է, իհարկէ ես ամբողջ Թուրքիայի պատգամաւոր եմ, միայն հայութեան պատգամաւորը չեմ, երկրում գոյութիւն ունի խտրականութիւններ, միաժամանակ գոյութիւն ունեն օրէնքներ՝ խտրականութեան եւ ատելութիւնը տարածելու դէմ, բայց դրանք չեն գործադրւում, պիտի աշխատեմ խտրականութեան դէմ գոյութիւն ունեցող օրէնքների ճիշտ գործադրման համար մեխանիզմներ գտնելու... շատ գործեր կան, որ պիտի անեմ... ինչպէս ասացի ես ամբողջ Թուրքիայի պատգամաւոր եմ:*

- Եթէ Ձեր կուսակցութիւնը խորհրդարանում մեծամասնութիւն դառնար եւ յաջողէր որ կառավարութիւն կազմել, արդեօք երկրի արտաքին քաղաքականութեան մէջ փոփոխութիւն կը ստեղծէիք:

- *Թուրքիայի արտաքին քաղաքականութիւնը հարկաւ որ պիտի փոխուի, մենք հիմա աւելի շատ թշնամիներ ունենք, քան բարեկամներ:*

- Իսկ Հայաստան-Թուրքիա յարաբերութեան մասին ի՞նչ է Ձեր կարծիքը:

- *Թուրքիայի եւ Հայաստանի սահմանը պիտի բացուի, այս երկու ազգը պիտի առիթը ունենան աւելի շատ միմեանց ճանաչեն:*

- Այդ ուղղութեամբ ի՞նչ կասէք Սփիւռքի պարագային:

- *Սփիւռքի պարագային էլ պիտի ասեմ, որ այս թշնամանքի ու խորթութեան պատճառը աւելի շատ այն պատճառով է, որ հայերը եւ թուրքերը միմեանց չեն ճանաչում, օրինակ անցեալ Ապրիլ 24-ի օրերին Սփիւռքից շատ հայեր եկան Ստամբուլ, սա շատ լաւ երեւոյթ էր, սփիւռքահայերը պիտի առիթը ունենան, որ աւելի լաւ կարողանան իրենց բացատրեն մեզ մօտ, եւ թուրքերէն լեզուով ոչ թէ հայերէնով, սա շատ կարեւոր հարց է, զանգւածային լրատւական միջոցներից պիտի օգտուել օրինակ հեռուստաալիքներ պիտի լինեն Սփիւռքից կամ Հայաստանից եւ թուրքերէն լեզուով ծրագրեր ունենան, կապեր պիտի հաստատուի սփիւռքահայ հաստատութիւնների եւ Թուրքիայի հաստատութիւնների միջեւ, ճամբորդութիւններ, փոխադարձ այցելութիւններ եւ նման շփումներ:*

●2015 թուականի նոյեմբերի 1-ին, տեղի ունեցան Թուրքիայի 25-րդ խորհրդարանական ընտրութիւնները եւ ընտրուեց Հանրապետութեան 26-րդ խորհրդարանը:

Այս շրջանի խորհրդարանում ընտրուել են երեք հայ պատգամաւոր՝
●Տկն. Սելինա Դողան (ԺՀԿ)
●Պրն. Կարօ Փայլան (ԺԴԿ)
●Պրն. Մարգար Եսայեան (ԱԶԿ)

---

1- Պրն. Երւանդ Օզուզուն, քաղաքապետի օգնական եւ Ստամբուլի պատրիարքարանի ժամանակի խորհրդատուներից, պոլսահայ մտաւորական եւ հասարակական գործիչ:

2- Էրդալ Դողան, փաստաբան մարդկային իրաւունքների հարցով, թուրքական «Թարաֆ» օրաթերթի յօդուածագիր, նաեւ եղել է Հրանտ Դինքի սպանութեան թղթածրարի փաստաբաններից, մտաւորական եւ մարդկային իրաւունքների հարցերի պաշտպան: